# Ազգ
Azg

17 ՄԱՅԻՍ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 88(4940)

ISSN: 1829-1651


## Իրանցի հոգեւորականն ու պատգամավորը Ադրբեջանի հետ «առեւտո՞ւր» են անում

Ադրբեջան-Իրան հակադրությունը հատկապես ընդգծված դրսեւորումներ է ունենում իսլամական շարժման նկատմամբ երկու երկրների տարբեր դիրքորոշումների համատեքստում, հատկապես երբ Ադրբեջանում աշխարհիկ են խաղում, իսկ Իրանից փորձում են իսլամական շարժումը առավել ընդգրկուն դարձնել հյուսիսային հարեւանի տարածքում: Ամեն դեպքում, երբ այս հակադրության ֆոնին շահարկվում են նաեւ այլ հասկացություններ, փոխադարձ ռեւերանսների փոխանակման գործընթացում մեջտեղ են բերվում նաեւ իրար սիրաշահելու հնարավորություն դիտարկվող, ասենք, «ադրբեջանական գրավյալ տարածքները վերադարձնելու» ու դրա նման հարցերը՝ հարկ է ողջախոհության կոչ անել... առնվազն:

Թեհրանի «Արաքս» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ «Յուրովիժն 2012» մրցույթի անցկացմանը համընթաց, Բաքվում՝ մայիսի 22-26-ը, համասեռականների ցույց արտոնելը մեծ բողոք է առաջացրել Իրանում, այդ կապակցությամբ առաջինը բողոքի ձայնն էլ բարձրացրել է Թավրիզի ուրբաթօրյա աղոթապետ այաթոլլահ Մոջթահետ Շաբեստարին:

«Բողոքները մայիսի 8-ին իրենց գագաթնակետին հասան Իրանի հյուսիս-արեւմտյան ամենակարեւոր քաղաքում՝ Թավրիզում: Ավելի քան տասը հազար ցուցարարներ Իսլամական խորհրդարանում Թավրիզի ներընտիր պատգամավոր Մոհամմադ Էսմայիլ Սաիդիի եւ մեծ թվով հոգեւորականների գլխավորությամբ փողոց իջան», գրում է շաբաթաթերթն ու հավելում, որ Ալիեւին ամոթանք տվող լոզունգներով ցուցարարները իրենց բողոքի երթը շարունակել են մինչեւ Թավրիզում Ադրբեջանի հյուպատոսարանի շենք:

Զուտ իրանական մոտեցումների համատեքստում հնչած կոչերի ու դատապարտման հետ, ադրբեջանախոս Թավրիզը ներկայացնող հոջաթոլիսլամ Մահմուդ Էսմայիլին հիշել է նաեւ «Ադրբեջանի տարածքների 20 տոկոսի բռնագրաված լինելը»՝ Բաքվից պահանջելով «գործնական քայլեր նախաձեռնել այդ տարածքները ազատելու համար»:

Առավել զավեշտալի է, երբ նույն ցուցարարները հրապարակել են ընդհանուր հայտարարություն, որում, ի շարս համասեռականների ցույցի դեմ կոչերի ու բողոքների, կարդում ես հետեւյալը. «Ադրբեջանի Հանրապետությունում ապրող մեր բոլոր քույր-եղբայրներին հայտարարում ենք՝ արդ, այնպես որ այսօր «Շուշա» քաղաքի գրավման 20-ամյակին, մտահոգված ենք այդ քաղաքի եւ այլ բռնագրավյալ շրջանների ճակատագրով, մենք եւս նրանց պես սիրելի Ղարաբաղի ազատության ցանկությունն ունենք եւ Ադրբեջանում իսլամական արժեքների հաստատման համար նրանց կողքին ենք լինելու եւ խիստ հավատում ենք Աստծո տված խոստումին՝ ընչազուրկների հաղթանակին Ադրբեջանի բռնապետների դեմ»:

Նախ, ակնհայտ է, որ ղարաբաղյան հարցում Իրանի բազմիցս հնչեցրած մոտեցման համադրությամբ այս խոսքերը մեկ-երկու ադրբեջանցու կամ ադրբեջանամետի դիտարկում են, բայց որ այս կերպ փորձ է արվում «առեւտուր» անել Ադրբեջանի հետ, նման է արեւելյան շուկայում ապրանք «սաղացնողի» մտածելակերպի: Ուստի Թավրիզի հավատավորներին ոտքի հանող պատգամավորին եւ հոգեւորականին հարկ է տեղ հասցնել այն պարզ իրողությունը, որ Արցախը արդեն նույն Շուշիի ազատագրման տարին ունեցող անկախ պետություն է, իսկ գրավյալ դեռ մնում են արցախյան որոշ հատվածներ, որոնց վերադարձի հարցը բարձրաձայնելու կարիք իսկապես կա:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## 100 հոգուց խորհրդարանի գաղափարը իշխանությունն ու ընդդիմությունը միաձայն թաղեցին

*Հրատապ է փոքրաթիվ եւ ամբողջովին համամասնական ընտրված Ազգային ժողով ունենալը*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ


ՖՈՏՈԼՈՒՐ

Խորհրդարանական ընտրությունները Հայաստանում ավարտվեցին: Արդա՞ր, թե՞ անարդար եղան դրանք, ո՞վ ինչպիսի գնահատական տվեց եւ այլն՝ այս ամենը դեռ երկար կշարունակվի քննարկվել: Սակայն բոլորն արդեն մոռացան ընտրություններին նախորդող շրջանում բուռն քննարկվող մի հարց, որի կարեւորությունը պայմանավորված չէ նախընտրական տրամաբանությամբ: Խոսքը պատգամավորների ընտրության ամբողջովին համամասնական ընտրակարգին անցնելու մասին է, ներկայիս խառը՝ 80 համամասնական եւ 41 մեծամասնական ընտրակարգի փոխարեն: Հիշեցնենք, որ լրիվ համամասնական ընտրակարգին դեմ էր իշխող՝ Հանրապետական կուսակցությունը:

Այժմ, երբ ընտրությունները մնացել են անցյալում, շատ հետաքրքրական է, թե լրիվ համամասնական ընտրակարգին կողմ արտահայտվող ուժերը նույն հետեւողականությամբ կբարձրացնե՞ն այս հարցը, թե՞ դա միայն ընտրություններին նախորդող ժամանակահատվածի համար էր: Ակնհայտ է, որ լրիվ համամասնական ընտրակարգին անցնելու հարցը հասունացել է, եւ հիմա ճիշտ ժամանակն է այդ ուղղությամբ օրենսդրական, այդ թվում՝ սահմանադրության փոփոխությունների վրա աշխատելու:

Նախ եւ առաջ, հրատապ է մեր Ազգային ժողովի պատգամավորների թիվը փոքրացնելը: Հիշեցնենք, որ 100 հոգուց բաղկացած Ազգային ժողովի մասին դրույթ նախատեսված էր երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ժամանակ սահմանադրական բարեփոխումների նախագծով, որը, սակայն, չընդունվեց: Տես էջ 2

## Հրաժարումն մանդատներից

Չնայած խորհրդարան անցած քաղաքական ուժերի համամասնական ցուցակներից անցողիկ հորիզոնականներում եղող անձանցից շատերի վերաբերյալ շրջանառվող լուրերի, թե նրանք ինքնաբացարկների դիմումներ են գրել՝ հրաժարվելով մանդատներից, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը երեկ եւ առաջին օրը ստացել է համամասնական ցուցակներից առաջին ինքնաբացարկները: Ըստ ԿԸՀ մամուլի քարտուղար **Հերմինե Հարությունյանի**՝ ինքնաբացարկներ են ներկայացրել ՀԱԿ համամասնական ցուցակի առաջին համար Լեւոն Տեր-Պետրոսյանը, ՕԵԿ առաջին համար Արթուր Բաղդասարյանը, ՕԵԿ անցողիկ համարներից այժմյան գյուղնախարար Սերգո Կարապետյանը, արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, «Ժառանգությունից» (ոչ անցողիկ համարներից) Լարիսա Ալավերդյանը:

Ըստ օրենսդրության՝ ինքաբացարկի դիմում ներկայացնելու համար ժամկետային սահմանափակում չկա, ուղղակի խորհրդարան անցած քաղաքական ուժերը մինչեւ մայիսի 31-ը կայանալիք նոր խորհրդարանի առաջին նիստը պետք է հստակեցնեն այն պատգամավորների անունները, որոնք պատգամավորական մանդատներ են ստանալու եւ ԿԸՀ-ից մանդատ ստանալուց հետո մասնակցելու են նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստին: Երեւի արդեն այսօր եւ վաղը ինքնաբացարկների դիմումներ կներկայացնեն ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի այն անդամները, որոնք պետք է պաշտոններ ստանձնեն գործադիրում՝ ճանապարհ բացելով օրենսդրական աշխատանքի գնալու պատրաստ ցուցակավորների համար:

Մ. Խ.

## «Դա ցեղասպանություն էր, մեծարգո վարչապետ»

*Էրդողանին է դիմում Թաներ Աքչամը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ



Թեեւ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը հետզհետե սպառնում է Թուրքիայի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականության դիրքերը, սակայն որքան դիրքերն սպառվեն, այնքան ագրեսիվ ու մարտնչող է դառնում ժխտողականությունը: Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի՝ 2015-ի մոտեցմանը զուգընթաց, Թուրքիայի ղեկավարները ավելի ու ավելի են կառչում ժխտողականությունից եւ պատմական իրողությունը ուրանալու համար ապավինում են ավելի քան անհեթեթ պատճառաբանությունների:

Քանի որ Թուրքիայում արմատակալել է իշխանություն-հասարակություն համերաշխությունը ցեղասպանության ուրացման հարցում՝ պայմանավորված հանցագործի հոգեբանությամբ, ուստի երկրի ղեկավարների պատճառաբանությունը անվերապահորեն իբրեւ ճշմարտություն ընդունվում է թուրքական իրականության մեջ: Դա պատահական չէ, այլ բխում է օսմանյան Թուրքիայում հայերի պետականորեն կազմակերպված ցեղասպանությանը թուրքական ժողովրդական զանգվածների մասնակցությունից: Այլ կերպ, թուրք ժողովուրդը մասնակցի կարգավիճակով ցեղասպանության հարցում իրազեկման խնդիր որպես այդպիսին երբեւէ չի ունեցել, ոչ էլ ունի:

Այդ պատճառաբանություններին թերեւս առարկում են առանձին թուրք մտավորականներ, որոնց մեջ առանձնակի տեղ ունի Թաներ Աքչամը: Ահա թե ինչ է նա գրել «Թարաֆ» թերթի ապրիլի 22-ի համարում.

Տես էջ 4

## Ամոթալի արարքը շարունակվում է

*Արամ Ա Վեհափառին Ամենայն հայոց կրոնապետ ներկայացնող պաստառը փոխեցին՝ կրկին գրելով միեւնույնը*

Ինչպես հայտնի է, Իրանի «Իսլամական մշակույթի եւ հաղորդակցության կազմակերպության» հրավերով, մայիսի 7-ից Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Վեհափառը գտնվում է Իրանում:

Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի հայտարարությունների եւ Թեհրանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու ճակատին տեղադրված պաստառի հետեւանքով, որտեղ Արամ Ա Վեհափառը ներկայացվել է որպես ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱՊԵՏ, զայրույթի եւ դժգոհության ալիք է ստեղծվել իրանահայ համայնքում:

Այդ դժգոհությունը ավելի խորացավ, երբ իրանական մամուլն ու լրատվությունը եւս, շփոթվելով, Արամ Ա. Վեհափառին ներկայացրին որպես Ամենայն հայոց կաթողիկոսի:

Առաջացած խառնաշփոթի հետեւանքով մայիսի 14-ին, News.am-ի հետ զրույցում, Ամենայն հայոց կաթողիկոսի մամլո խոսնակ Տ. Վահրամ քահանա Մելիքյանը ասել է. «Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է այսօրինակ պահվածքը, որով փորձվում է արհեստական շփոթ առաջացնել եւ այսկերպ լարվածություն առաջ բերել ներեկեղեցական եւ հանրային կյանքում»: Ավելացնելով՝ «Հարկ է, որ թեմական կառույցների պատասխանատուները եւ իրանական լրատվամիջոցների ներկայացուցիչները վերապահ մնան նման անընդունելի քայլերից եւ հարգեն եկեղեցական սրբազան նվիրապետությունը»:

Թեհրանի հայոց թեմի թեմական խորհուրդը, առաջացած դժգոհության հետեւանքով, խորամանկորեն, Ս. Սարգիս եկեղեցու ճակատին տեղադրված պաստառը փոխարինել է մի նոր պաստառով, որի բովանդակությունը շատ տարբեր չէ առաջինից՝ կրկին պարսկերեն լեզվով, Արամ Ա. Վեհափառին ներկայացնելով՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿՐՈՆԱՊԵՏ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ:

Հիշեցնենք, որ Թեհրանի հայոց թեմի եկեղեցիներում սբ պատարագ մատուցելիս, Արամ Ա-ին հիշելիս նաեւ հիշատակվում է՝ «Արամ Ա կաթողիկոս Ամենայն հայոց Մեծի Տանն Կիլիկիո»:

## Անդրադարձ

Անտառը, իրար կողքի ծառերը միասնության խորհուրդ ունեն: Քաղաքները, որտեղ ծառեր կան, երկրները, որոնք անտառներով են հարուստ, առողջ հասարակություն, քաղաքացի են կերտում, դաստիարակում: Իսկ երբ այդ քաղաքացին է անտառ ստեղծում, ծառ տնկում, ուրեմն նա գիտի, ու չի մոռանա անտառի խորհուրդն ու արժեքը, նա այլեւս ծառ չի հատի: Հետեւաբար մենք նաեւ ծառեր տնկելով պետք է քաղաքացիական հասարակություն հիմնենք, նպաստենք նրա ակտիվացմանը, նաեւ ծառ տնկելով բոլորով մի գործ ենք անում, ինչն արդեն համախմբման նշանակություն ունի:



# Նաեւ ծառեր տնկելով…



Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի նախաձեռնած «Անմեղ նահատակի հիշատակին» խորագրով ծառատունկը շարունակվում է: Հիշեցնենք, որ երկու տարի առաջ Գիտությունների ազգային ակադեմիայում Կոնգրեսի Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան հնչեցրեց կոչ՝ մինչեւ Ցեղասպանության հարյուրերորդ տարելիցը Հայաստանի տարածքում, հիմնականում երիտասարդության ուժերով տնկել 1,5 մլն ծառ՝ Ցեղասպանության ամեն մի զոհի հիշատակին:

«**Ազգը**» մշտապես այս նախաձեռնության կողքին է եղել, նախաձեռնություն, որը միանգամից ուղղված է մի քանի խնդիրների լուծմանը: Ցեղասպանության զոհերի հիշատակը, հատկապես երիտասարդության շրջանում վառ պահելուն, քաղաքացիական ակտիվ շերտի ձեւավորմանը, որը իր մեկ ծառը տնկելով, փաստորեն, մասնակիցն է ազգային նախաձեռնությանը, եւ վերջապես էկոլոգիական խնդիրների լուծմանը: Գաղտնիք չէ, որ մեր՝ առանց այն էլ «ծառազուրկ երկրում» բազմաթիվ ծառեր հատվեցին, գաղտնիք չէ նաեւ, որ այսօր շատերը պայքարում են ու բավական արդյունավետ, կանաչ տարածքների պահպանման համար, ու այս համատեքստում այս նախաձեռնությունը գալիս է էլ ավելի լրացնելու, ամբողջացնելու մեր քաղաքացիական ակտիվ հանրության ձեւավորումը, նրա մեջ ազգային արժեքների հանդեպ ակնածանքի պահպանումն ու սեփական ժողովրդի պատմության ամենացավալի էջի չմոռացությունը:

Այս տարի, ինչպես եւ անցած տարիներին, ծառատունկը մեծ արձագանք ստացավ, ավելին, այս տարի ՌԴ հայերի միության եւ Կոնգրեսի երիտասարդական կազմակերպության կոչն ընդլայնեց իր աշխարհագրությունը. Տավուշի մարզի Մովսես գյուղը՝ ի դեմս գյուղապետ Լյուդվիգ Ապերյանի ու գյուղի դպրոցի տնօրեն Ռուզաննա Ադամյանի, ապրիլի 13-ին եւ 14-ին գյուղի տարածքում իրականացրել է ծառատունկ: Տնկվել է 150 սոճի, որոնք գյուղին է տրամադրել ՌԴ հայերի միությունը եւ Կոնգրեսը: Ի դեպ, ՌՀՄ-ին ծառերի տնկիներն իր հերթին մեծ պատրաստակամությամբ տրամադրում է Սոս Սարգսյանի գլխավորությամբ գործող «Կանաչապատ երկիր» հասարակական կազմակերպությունը:

Մովսեսի գյուղապետ **Ապերյանը**, ընդգծելով, որ իրենք արձագանքում են Կոնգրեսի կոչին, ասում է. «Խորհրդանշական է, որ ծառատունկով հիմք դրվեց նաեւ Արցախյան ազատամարտի մովսեսցիների հիշատակի անտառակին, մշակույթի տանը կից Մովսեսի տոհմերի պուրակին, սկիզբ դրվեց Մովսեսի միջնակարգ դպրոցի 160-ամյակի միջոցառումներին»: Սա նշանակում է, որ ծառատունկը Մովսես գյուղում եւս վերածվել էր իսկական տոնախմբության, մեր հերոսների եւ անմեղ զոհերի հիշատակին հարգանքի տուրքի, ու նաեւ գյուղի դպրոցի՝ մեկ դարից ավել տարեդարձը տոնելուն: Հենց սա էլ խորհրդանշում է ամեն մի ծառը, հիշատակում անցյալի մեծ կորուստների ու հերոսական էջերի, եւ վաղվա հանդեպ՝ մեծ հույս, ավելին՝ վստահություն:

Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը եւս անարձագանք չթողեց այս ազգանվեր կոչը: Ռուսաստանի հայերի միությունը եւ Կոնգրեսը Մայր աթոռին նվիրաբերել է տարբեր տեսակի տնկիներ՝ վայրի տանձենիներ, խնձորենիներ, ընկուզենիներ, եղեւնիներ: Էջմիածնի հոգեւոր ճեմարանի սաներն ու տեղի բնակչությունը, առավելապես երիտասարդներ ու երեխաներ, մասնակցել են ծառատունկին, ինչը տեղի է ունեցել Սուրբ Շողակաթ, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Գայանե եկեղեցիների տարածքներում, այնուհետեւ՝ Գեղարդավանքում եւ Խոր Վիրապ եկեղեցու տարածքում:

Մայր աթոռի նման արձագանքը ՌՀՄ-ի եւ Կոնգրեսի կոչին եւս մեկ անգամ ցույց է տալիս այս նախաձեռնության ազգային, համահայկական լինելը:

Ծառատունկի հաջորդ վայրը մայրաքաղաքի Թումանյանի այգին էր: Այգում շուտով նոր տնկված պուրակում կտեղադրվի պաստառ, որտեղ կնշվի, որ պուրակն ստեղծվել է Կոնգրեսի նախաձեռնությամբ, եւ «Անմեղ նահատակի հիշատակին» հասարակական շարժման արդյունքն է: Այգում ծառատունկին մասնակցել են հիմնականում դպրոցականներ՝ հատուկ երաժշտական դպրոցի սաները, որոնք ամեն տարի մասնակից են լինում Կոնգրեսի նախաձեռնած ծառատունկին, Զարենցի անվան թիվ 67 դպրոցի սաները եւ կարատե-դո ֆեդերացիայի սաները: Սա, ինչպես վերը նշեցինք, խիստ կարեւոր է, քանի որ երբ ծառ է տնկում երեխան, դպրոցականը, դա նշանակում է, որ նա երբեք ծառ չի հատի:

Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի նախաձեռնությունը, արդեն երրորդ տարին ապացուցված, շարունակական է: Ծառատունկը կշարունակվի նաեւ այս աշնանը: Այժմ արդեն հայտնի է, որ Ուկրաինայի հայկական երիտասարդական կազմակերպություններից մեկը խոստացել է աշնանն ուղարկել կեչիներ, իսկ Ռուսաստանի նման կազմակերպություններից մեկը ցանկություն է հայտնել իր խնամակալության տակ առնել արդեն իսկ տնկված պուրակներից մեկը:

Հարկ ենք համարում նկատել, որ սրա կարիքը կա. անցյալ տարի Ծիծեռնակաբերդի տարածքում Կոնգրեսի տնկած ծառերից շատերը ոմանք կոտրել էին… հավանաբար այդ մարդիկ երբեք կյանքում ծառ չեն տնկել:

Հ. Ա.



# Ավանդական կերակուրները՝ տուրիզմի զարգացման տարբերակ

Մախոխ, բոզբաշ, տոլմայի տեսակներ: Սրանք այն ավանդական կերակուրներն են, որոնք նախընտրում են զբոսաշրջիկները Հայաստան այցելության ընթացքում:

«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» ՀԿ-ի նախագահ, խոհարար **Սեդրակ Մամուլյանը** հավաստիացնում է, որ հայերն այն եզակի ազգերի թվին են պատկանում, որոնք ունեն լավ մշակված սննդակարգ 365 օրվա համար:

Տուրիստների համար նախատեսված են ավանդական կերակրատեսակների 30 տարբերակ, ապուրներ, աղցաններ, աղանդերներ:

Մամուլյանը նշում է, որ տարեցտարի զբոսաշրջիկների համար նախատեսված կերակրացանկն ավելանում է:

Նրա գնահատմամբ՝ տուրիզմի զարգացման գործում մեծ դերակատարություն ունի նաեւ ազգային խոհանոցը: Հենց դա է պատճառը, որ վերջին մի քանի տարիներին Հայաստանում կազմակերպվում են փառատոներ, որոնց նպատակն է ներկայացնել հայկական կերակրատեսակները:

Այս տարի նախատեսվում է անցկացնել կերակրատեսակներին նվիրված չորս փառատոն: Հուլիսի 11-ին Սարդարապատում կնշվի տոլմայի փառատոնը, սեպտեմբերի 8-ին Ախթալայում՝ խորովածի փառատոնը, հոկտեմբերի 6-ին՝ գինու փառատոնը: Այս տարի օգոստոսի 11-ին առաջին անգամ նշվելու է Նավասարդը, որը կոչվելու է Թոնրատոն եւ նշվելու է Սեւանի տարածաշրջանի Ծաղկունք գյուղում: Փառատոնի ընթացքում կկազմակերպվի նաեւ թոնիրում պատրաստված կերակուրների ցուցահանդես:

Շուտով կհրատարակվի տոլմայի 70 տեսակների մասին գիրք: Մամուլյանը շեշտում է, որ անցկացված փառատոներն ազդեցիկ են: Օրինակ, նախորդ տարի «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակներում անցկացված տոլմայի փառատոնից հետո օտարազգի ռեժիսորներն ու դերասանները միայն տոլմա էին պատվիրում: Մամուլյանն ընդգծում է, եթե ոչ առավել, ապա գոնե հավասար չափով օտարազգի հյուրերը խոսում էին տոլմայի եւ կինոյի մասին:

«Ռոմեա» ճամփորդությունների ակումբի գլխավոր տնօրեն **Ռուբեն Գրիգորյանի** մեկնաբանությամբ միշտ խնդիր է առաջանում, թե ի՞նչ կերակուր պետք է առաջարկեն զբոսաշրջիկներին: Նա շեշտում է, որ քիչ են խոհարարները, ովքեր կարողանում են ավանդական կերակուրներ պատրաստել: Սակայն այս հարցում նա նկատում է առաջընթաց, ինչն էլ նպաստում է երկրում տուրիզմի զարգացմանը:

Հ. Հ.

# Մելքումով փողոցի բնակիչները մեկ շաբաթ զրկված են ջրից

«**Ազգը**» մայիսի 16-ին, ժամը 17-ին էլեկտրոնային նամակ ստացավ, որում Դավթաշեն գյուղի ու հարակից տների (Մելքումով փողոց) բնակիչները իրենց զայրույթն էին հայտնել «Երեւան ջուր» ընկերության հասցեին, որոնց օպերատորները մեկ շաբաթ շարունակ արձանագրում էին իրենց ահազանգը, որ ջուր չունեն, սակայն հարցը չի լուծվում:

«**Ազգը**» զանգահարեց «Երեւան ջուր» ընկերության 1-85 ծառայություն, եւ օպերատիվ բաժնի պատասխանատու **Նունե Մեսրոպյանը** պատասխանեց. «Մեր աշխատակիցները տեղյակ են այդ հասցեում ջրամատակարարման դադարի մասին: Ջրի խողովակներում խցանումներ եւ ճնշման տատանումներ են եղել: Մի քանի ժամից կկարգավորվի»: «**Ազգի**» հարցին՝ մեկ շաբաթում հնարավոր չէ՞ր կարգավորել, համակարգող տիկինը պատասխանեց, որ աշխատանքները ընթանում են, եւ մինչեւ երեկո ջրամատակարարումը կվերականգնվի: Հուսանք, որ խոստումը գործ կդառնա:

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ի կենտրոններից հեռախոս գնողները կարող են մասնակցել հատուկ խաղարկության

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, տեղեկացնում է, որ ս.թ. մայիսի 14-ից մինչեւ հունիսի 10, գնելով MTS, HTC, BlackBerry, Samsung Galaxy Nexus կամ Samsung Google Nexus S հեռախոս ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններից, կարելի է մասնակցել հատուկ խաղարկության եւ շահել արժեքավոր նվերներ, այդ թվում՝

HTC Flyer պլանշետային համակարգիչ,

BlackBerry Bold 9700 սմարթֆոն,

Samsung Google Nexus S սմարթֆոն,

MTS Ego սմարթֆոն,

MTS Touch 551 հեռախոս,

«ՄՏՍ կոնեկտ դայմոնդ» USB մոդեմ:

Իսկ ամենահաջողակին սպասում է գլխավոր մրցանակը՝ ճամփորդություն երկու հոգու համար դեպի 2012 թվականի Եվրոպայի ֆուտբոլի առաջնության հաղթող երկիրը:



Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

ԱԶԳ

## Դատաքննություն

# Հանուն մեկ մարդու ֆիզիկական ազատության

Երեք ամիս շարունակ ընդգրկված լինելով Մաշտոցի զբոսայգում ծավալված ապօրինի կառուցապատումների դեմ շարժման մեջ եւ ներկա լինելով այնտեղ կազմակերպված միջոցառումներին՝ տեղեկացա մեր իրականության վերաբերյալ մի շարք նորանոր խնդիրների: Դրանցից ամենից շատ ինձ հուզեց ցմահ բանտարկյալների խնդիրը (բոլորը կհամաձայնեն, որ մեր փոքրիկ հանրապետության համար 104 ցմահ դատապարտյալ ունենալը չափազանց մեծ թիվ է): Այդ հարցին ծանոթանալու առիթը եղավ Մաշտոցի զբոսայգում կազմակերպված Մհեր Ենոքյանի «Ես զրուցում եմ քեզ հետ, Մարդ» վերնագրով գրքի շնորհանդեսը, որի վաճառքից ստացված գումարը հեղինակի ցանկությամբ եւ նրա անունից հարազատները փոխանցում են քաղցկեղով հիվանդ երկու երեխաների հաշվեհամարներին:

Գիրքն արագ կլանեցի նույն օրը, ավելի ճիշտ՝ գիշերը: Առանց չափազանցության՝ այդ գրքի ընթերցանությունից հետո մինչեւ այս պահը կորցրել եմ հանգիստս: Անսպառ երեւակայություն, անչար բնություն տեսա, անկեղծություն, հերոսները՝ պարզ, շիտակ: Նրա հերոսներից մեկը երեւանյան ծառն էր գրկել ու համբուրում դեռ մի քանի կանաչ մնացած տերեւները... այդպես կարող է գրչի ծայրից դուրս թռչել միայն խորը վերապրումը:

Պատմությունից գիտենք, այո, որ չորս պատի մեջ արգելափակումը շատերին է գրող դարձրել: Սակայն այլ է, երբ գիտակցում ես, որ տվյալ պարագայում գործ ունես քո ժամանակակցի, գրեթե քո սերնդակցի հետ, որն ապրում է քեզ հետ նույն քաղաքում, ունի գրական հակումներ, սակայն դու ազատության մեջ ես, իսկ նա ասես ողջ-ողջ թաղված է Նուբարաշենի բանտում արդեն 16 տարի եւ այնտեղից պարբերաբար հիշեցնել է տալիս իր մասին՝ շարունակ պնդելով իր անմեղությունը: Աննախադեպ մի երեւույթ. թերի բարձրագույն կրթությամբ մի ցմահ դատապարտյալ ոչ միայն կարողացել է գրել միանգամայն ընթերցվող մի գիրք, այն էլ՝ երկլեզու (հայերեն եւ ռուսերեն)՝ հասարակությանն իրազեկելով նրան գրեթե անհայտ մնացած մի խնդրի մասին, այլեւ որ անգամ ճաղերի հետեւից իր այդ քայլով նա փորձում է նպաստել իր հայրենակից երկու երեխայի առողջացման գործին: Անմիջապես սկսեցի փնտրել համացանցում Մհեր Ենոքյան անունը. չեք պատկերացնի, թե որքան տեղեկատվություն թափվեց ինձ վրա: Նայում էի բոլոր տեսանյութերը, կարդում բոլոր հոդվածները: Ծանոթացա ցմահ դատապարտյալների հարցերով զբաղվող քաղաքացիական նախաձեռնության անդամների հետ, զրուցեցինք, իմացա, որ նրանք նույնպես սկսել են Մհերից՝ արձագանքելով նրա՝ մամուլում տպագրված «Ես մարդ չեմ սպանել» հոդվածին:

Չեմ ցանկանում խոսել Հայաստանում ցմահ դատապարտվածների խնդիրներից առհասարակ (խումբն արդեն իսկ ուսումնասիրություններ, կլոր սեղաններ ու իրազեկման արշավներ է կատարում այս ուղղությամբ), ուզում եմ խոսել մարդու մասին, Մհերի մասին, ում հետ շուտով նամակագրություն հաստատեցի, նրան ուղարկեցի իմ ու այլ հեղինակների գրքերից, իմ պատրաստած հեռուստահաղորդումների սկավառակներ ու երաժշտական խտասալիկներ: Մենք խոսում ենք ամենատարբեր թեմաներից: Երբեմն հարցնում է հայոց լեզվի այս կամ այն նրբությունների մասին: Գրում է, որ 16 տարի փորձում է ողնաշարը ձիգ պահել, չճկվել, չկոտրվել, գրում է, որ միշտ սպորտով է զբաղվում՝ անգամ փակի տակ սարսափելի 90-ականներին, երբ յոթ տարի արեւի երես անգամ չէր տեսել: Հասկացա, որ նա իմ տեսակից, նույն արժեքները կրող, առողջ մտքով ու հոգով անձ է՝ պահպանած դեմք-դիմագիծ, հասկացա, թե որքան դժվար է այդ ամենն անել փակի տակ, երբ շուրջդ քո տեսակից, քո աշխարհից այնքան քիչ մարդ կա: Ու եթե չիմանայի, որ շուտով կգլորվի 17-րդ տարին, որ փակ ռեժիմում է, կկարծեի, որ մեկ օր առաջ են նրան մեկուսացրել հասարակությունից, կամ ինձ նամակներ գրողը, ասենք, արտերկրում է: Քսան տարեկանում հայտնվելով բանտում՝ նա այդպես էլ ոչ մի օր չի ենթարկվել բանտային ներքին օրենքներին: Անգամ սովորական ծխելը նա չի ընդունել, այլեւ չասած բանտային այլ ավանդույթների մասին: Նա անընդհատ ստեղծագործական աշխատանքի մեջ է, գրում է պատմվածքներ եւ հոդվածներ, նկարում է ու մտքերը փոխանցում, ինչպես ինքն է գրում՝ ՈՂՋԵՐԻ աշխարհ: Գրում է, որ այժմ էլ աշխատում է իր երկրորդ գրքի վրա, որը վիպակ է, ինչպես ինքն է գրում, գեղարվեստականի ու փաստագրականության միաձուլում: Մամուլից իմացա նաեւ, որ նրա դիմումագրի շնորհիվ մեր խորհրդարանը «Դոնորության» մասին օրենքում փոփոխություն է մտցրել, ըստ որի դատապարտված մարդիկ կարող են մոտիկ հարազատների համար որպես օրգանի դոնոր հանդես գալ: Հաջորդ քայլս՝ փորձեցի տեսակցել Մհերին, որպես մի գրչի մարդ, որը ցանկանում է տեսակցել մեկ այլ գրչի մարդու: Նույնիսկ մեկ անգամ խմբի անդամների հետ եղանք Նուբարաշենում, սակայն ներս մտնել այդպես էլ չկարողացանք, թեպետ նախապես գրություն էի գրել եւ մեզ հավաստացրել էին, թե տեսակցելու հնարավորություն կտան: Չհանձնվեցի, նորից եմ գրել, այս անգամ՝ Արդարադատության նախարար պրն Հրայր Թովմասյանին...

Մհեր Ենոքյանի գրքի գրական արժանիքների մասին խոսելը թողնելով մեկ այլ առիթի՝ պարտքս եմ համարում իմ կողմից նույնպես բարձրաձայնել նրա ճակատագրի վերաբերյալ: 1975 թվականին ծնված այս երիտասարդը, որն ուսանել է Երեւանի բժշկական ինստիտուտի ատամնաբուժական ֆակուլտետում, 3-րդ կուրսում՝ 20 տարեկանում մեղադրվել է մեկ անձի՝ համակուրսեցու սպանության մեջ՝ դատապարտվելով գնդակահարության (նախկին Քրեական Օրենսգրքի 99-րդ հոդված 1-ին եւ 6-րդ կետերով): Ոչ դատարանում, ոչ էլ մինչ օրս Մհերն իրեն մեղավոր չի ճանաչել՝ պնդելով, որ մարդասպան չէ: Դատարանում տվել է միեւնույն ցուցմունքները, թե փորձել է կանխել հանցագործությունը, սակայն դա նրան չի հաջողվել: Մինչդեռ դատարանի կողմից արժանահավաս է համարվել գործով մյուս մեղադրյալի՝ Արամ Հարությունյանի նախաքննության ընթացքում տված պարբերաբար փոփոխվող ցուցմունքներից մեկը, ըստ որի սպանությունն ունեցել է կանխամտածված ու շահադիտական բնույթ: Արամն ընդունել է մեղքը՝ ասելով, որ կատարել է սպանություն: Դատապարտվել է նույն հոդվածով՝ 99-րդի 1-ին եւ



6-րդ կետերով, սակայն 15 տարվա ազատազրկման: Արամ Հարությունյանը մեկ տարի է արդեն ազատության մեջ է: Իսկ 1996 թվականին մահապատժի դատապարտված Մհերի դատավճիռը 2003 թվականին ՀՀ նախագահի ներման հրամանագրով փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ:

16 տարի Ենոքյանն իր ընտանիքի հետ պայքարել է գործի վերաբացման համար, սակայն անարդյունք: Չստանալով որեւէ հուսադրող պատասխան՝ իր վրա ուշադրություն բեւեռելու նպատակով նա ՔԿՀ-ներից երկու անգամ դիմել է փախուստի 2004 եւ 2009 թվականներին (մի արարք, որ քրեորեն պատժելի չի համարվում շատ երկրներում, օրինակ, Գերմանիայում): Ընդհանուր առմամբ 32 օր մնալով ազատության մեջ՝ չի կատարել եւ ոչ մի հանցավոր արարք: ՀՀ բոլոր նախագահներին գրած տասնյակ դիմումների պատասխանները ստացվել են մեկ մարմնից՝ Դատախազությունից, որտեղ նշված է եղել՝ անհրաժեշտ են նոր երեւան եկած հանգամանքներ: Այսօր դրանք վերջապես երեւան են եկել: Այդ մասին տեղեկացանք Մհեր Ենոքյանի՝ պետական այրերին ու հանրությանն ուղղված վերջին դիմումից («Հրապարակ», 20.04.2012), որտեղ նշված է, որ իր փաստաբանի ջանքերով քրեական գործում երեւան են եկել նոր հանգամանքներ, որ ողջ փաթեթը, օրենքով սահմանված կարգով, ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան ու Գլխավոր դատախազություն:

Մհեր Ենոքյանի ճակատագրով մտահոգ մարդիկ, որոնց մեջ արվեստագետներ ու մտավորականներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ մեկուկես տարվա ընթացքում բազմաթիվ ստորագրություններով դիմում-խնդրանքներ են ուղղել ՀՀ նախագահի նստավայր, Գլխավոր դատախազին, Արդարադատության նախարարին, նաեւ ՀՀ Վճռաբեկ դատարան: Հաշվի առնելով, որ Ենոքյանը դատապարտման ժամանակ եղել է 20 տարեկան, նախկինում դատված չի եղել, ուսանել է ԲՈՒՀ-ում, բացի այդ տարբեր տարիների փաստաբանական տեղեկանքները վկայում են գործի հապճեպ ու անկատար քննության մասին՝ այդ խումբը խնդրել է ընձեռել պատժաչափի վերանայման հնարավորություն:

Հասարակական գործունեությամբ զբաղվող մարդիկ՝ մտավորականներ եւ արվեստագետներ, իրենց պարտքն են համարում ինչ-որ կերպ մասնակից լինել, որպեսզի ողջ ճշմարտությունը բացահայտվի: Եվ, եթե Մհեր Ենոքյանը մեղավոր է, ապա այդ մեղադրական փաստարկները պետք է բոլորիս համար համոզիչ լինեն, չէ որ գիտենք՝ մարդուն հասարակությունից մեկուսացնում են հենց նույն հասարակության, ասել է թե՝ մեր անունից: Իսկ մենք մեր անդամին ետ կանչելու որեւէ մեխանիզմ չունենք: Մինչ օրս, գործում չփարատված կասկածներ կան, եւ հանրությունը ցանկանում է գործի վերաբացման արդյունքում ստանալ իրեն հուզող հարցերի պատասխանները: Այդ խումբը, մարդիկ միաժամանակ քաջ գիտակցում են տուժող կողմի անանց ողբերգությունը, կիսում այդ անդառնալի վիշտը: Դա առաջին հերթին գիտակցում է նաեւ Մհեր Ենոքյանն ինքը՝ իր գրքի էջերում ներողություն հայցելով սպանված ընկերոջից եւ նրա հարազատներից, «նրա համար, որ միգուցե վախից չարեցի ավելին՝ ողբերգությունը կանխելու համար: Բայց ես չեմ կարող ներողություն խնդրել նրա համար, ինչը ես չեմ արել»...

Բայց ո՛չ ես, ո՛չ Մհեր Ենոքյանի ճակատագրով մտահոգ մարդիկ դատավորներ կամ իրավաբաններ չենք, պարզապես մենք հետամուտ ենք արդար դատաքննության, մանավանդ որ Ենոքյանի քրեական գործում 16 տարի անց նոր երեւան եկած հանգամանքները բացառիկ հնարավորություն են ընձեռում գործը վերաբացելու եւ նոր դատավարություն կազմակերպելու՝ արդար դատաքննության իրավունքի բոլոր նորմերին համապատասխան: Եվ սա միայն Մհեր Ենոքյանի խնդիրը չէ, սա հասարակության խնդիրն է, որտեղ մարդկային ճակատագիրը պիտի դառնա գերագույն արժեք: Ուրեմն՝ ո՛չ անտարբերությանը:

**ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ**
**Հայագետ, գեղարվեստագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող, Հայաստանի Գրողների միության անդամ**

***Հ. Գ.***-*Մայիսի 11-ին Մհեր Ենոքյանը իրենց ընտանեկան հարուստ գրադարանի ամենահին գրքերից վեցը՝ 1823-1936 թթ. տպագրված հազվագյուտ եւ արժեքավոր հրատարակություններ, հարազատների միջոցով նվիրաբերեց Էջմիածնի Վեհարանի գրադարանին: Առաջին անգամ Վեհարանի գրադարանը նվիրատվություն ստացավ բանտարկյալից...*

---

**ՀԱՐՑԵՐ՝ ԷՐԴՈՂԱՆԻՆ**

# «Դա ցեղասպանություն էր, մեծարգո վարչապետ»

## *Էրդողանին է դիմում Թաներ Աքչամը*

*1-ին էջից*

«Չգիտեմ ինչու որոշեցի մի քանի հարցեր ուղղել վարչապետ Էրդողանին, որը ապրիլի 24-ի օրերին ասում էր. «Իմ ազգը ցեղասպանություն չի անի: Մահմեդականների պատմության մեջ ցեղասպանություն երբեւէ չի եղել»: Նրա ասածները որպես ճշմարտություն ընդունելու դեպքում իմ առջեւ ծառանում են հարցականներ, իսկ ես դրանց պատասխանը չեմ գտնում: Հուսով եմ, որ այդ հարցերին կպատասխանի վարչապետը:

Իմ նպատակը բանավեճի մեջ մտնելը չէ, այլ օսմանյան որոշ վավերագրերի առնչությամբ վարչապետից պարզաբանումներ ստանալը, որովհետեւ այդ վավերագրերը հեռագրեր են եւ պատկանում են 1915-ի սկզբներին օսմանյան կառավարության ներքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցնող Թալեաթ փաշային:

Առաջին հեռագիրը 1915-ի օգոստոսի 29-ին ուղարկվել է Անկարա: Հեռագրում Թալեաթ փաշան ասում է. «Արեւելյան վիլայեթներում հայկական հարցն արդեն լուծված է: Ավելորդ բռնություն կիրառելու միջոցով հարկ չկա արատավորելու մեր ազգին եւ կառավարությանը»: Հեռագրի լեզուն շատ պարզ է: Նա ընդունում է մինչեւ օգոստոսի 29 հանցագործությունների կատարման փաստը, օգոստոսի 29-ին հայկական հարցի լուծված լինելու պատճառով բռնության դիմելն այլեւս համարում է ավելորդ: Այդ իսկ պատճառով էլ հեռագրում է. «Ավելորդ բռնության կարիքը չկա»:

Չափազանց պարզ է նաեւ իմ հարցը՝ մեծարգո վարչապետ, 10 տարի շարունակ երկրում կառավարության ղեկավարն եք: Որպես ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան ինչո՞ւ է «ավելորդ» բռնությունները տարբերակում «ոչ ավելորդ» բռնություններից: Ո՞րն է «ավելորդ» բռնության իմաստը: Ովքե՞ր են կիրառել «ավելորդ եւ ոչ ավելորդ» բռնությունները: Եթե Ձեր նշած «ազգը» չէ, ապա ո՞վ է դրանք կիրառել: Կատարվել է հանցագործություն եւ դա կառավարության անդամը հաստատում է, միաժամանակ ընդունում՝ բաժանելով «ավելորդի» եւ «ոչ ավելորդի»: Մեկ հարց եւս. արդյոք դատական գործ հարուցվե՞լ է «ավելորդ» եւ «ոչ ավելորդ» հանցագործությունները իրականացնողների դեմ: Դուք չգիտե՞ք:

Խնդրում եմ պատասխանեք, ո՞րն է հայկական հարցի էությունը, որ դրա համար լուծում է պահանջվում: Եվ ինչի՞ հիման վրա է այդ հարցը «լուծված» համարվում:

Թալեաթ փաշան ունի նաեւ երկու հեռագիր եւս: Առաջինը նույնպես 1915-ի օգոստոսի 29-ին է ուղարկվել, ընդ որում գրեթե բոլոր վիլայեթներ, որտեղ մատնանշվում է. «Իրենց բնակավայրերից հայերին տեղահանելիս եւ նշանակման վայր ուղարկելիս կառավարությունն առաջնորդվել է այս տարրերին հակակառավարական գործունեությունից զրկելու, Հայաստան պետության ստեղծման ազգային նպատակներից հեռու պահելու ակնկալիքներով եւ ձգտումներով»:

Հետեւաբար, մեծարգո վարչապետ, տեղի ունեցածը ցեղասպանություն էր»:

# Բաքուն անցել է բամբասանքի «ժանրին»

Ադրբեջանի արտգործնախարարությունը շատ օպերատիվ արձագանքել է ՀՀ ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանի պնդմանը, որ «երբ տեղի է ունենում ինքնորոշում, մետրոպոլիան չի կարող վկայակոչել տարածքային ամբողջականությունը»: Հարեւան երկրի արտաքին քաղաքական գերատեսչության մամլո խոսնակը, առարկելով դրան, վկայակոչել է ՄԱԿ-ի կանոնադրության երկրորդ հոդվածի չորրորդ մասը, որտեղ ասված է, որ Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամները «իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժի սպառնալիքից կամ այն կիրառելուց` ինչպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այնպես էլ որեւէ այլ ձեւով, որը անհամատեղելի է Միավորված ազգերի նպատակներին»:

Ըստ այդմ, Ադրբեջանի ԱԳՆ-ն Լեռնային Ղարաբաղի խնդիրը դիտարկում է ոչ թե ինքնորոշման, այլ «ՄԱԿ-ի անդամ մի երկրի կողմից մյուսի տարածքային ամբողջականությունը խախտած լինելու» տիրույթում: Մի կողմ թողնենք այն, որ սա արվում է միտումնավոր, քանի որ հարցն ինքնորոշման տեսանկյունից քննարկելու դեպքում Ադրբեջանը որեւէ հակափաստարկ վկայակոչել չի կարող: Հարկ է զինվել սառնասրտությամբ եւ փորձել պարզել` հակամարտության զինված փուլի ողջ ընթացքում Ադրբեջանը երբեւէ դիմե՞լ է միջազգային հանրությանը` «արտաքին ագրեսիայի ենթարկված լինելու» կամ «այդ ագրեսիան դադարեցնելու» կամ «ագրեսիան կասեցնելու նպատակով օժանդակության» խնդրանքով:

Սա շատ կարեւոր հանգամանք է, քանի որ միջազգային պրակտիկայում ագրեսիայի ենթարկված պետությունը պաշտոնապես այդ մասին հայտարարում եւ միջազգային հանրությունից օգնություն է խնդրում: Ադրբեջանը ՄԱԿ-ին անդամակցել է, երբ հակամարտության գոտում ռազմական գործողությունները դեռեւս տեղական նշանակության էին: Ցանկության դեպքում այդ երկիրը կարող էր ՄԱԿ-ում բարձրացնել «արտաքին ագրեսիան կասեցնելու» հարցը: Ինչո՞ւ դա չի արվել: Ընդ որում, նման հայտարարություն Ադրբեջանը չի արել նաեւ հետագայում:

Պատճառն ակնհայտ է. պատերազմական գործողությունների դադարեցումը երբեք չի եղել ադրբեջանական իշխանությունների նպատակ: Ընդհակառակը, հենց Բաքուն է պատերազմն ընտրել որպես ԼՂ հիմնախնդրի «կարգավորման միջոց» եւ մինչեւ այսօր էլ շարունակում է պնդել, որ ունի «պատերազմը վերսկսելու իրավունք»: Թեեւ որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, որի համար այդ կազմակերպության կանոնադրությանը ենթարկվելը պարտադիր է, Ադրբեջանը պարտավոր է բոլոր վիճելի հարցերը կարգավորել խաղաղ ճանապարհով:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի կանոնադրությունից Ադրբեջանի ԱԳՆ արած մեջբերմանը, ապա հարկ է դիտել տալ, որ այդ հոդվածում ուժի սպառնալիքը կամ դրա կիրառումն անթույլատրելի է համարվում ոչ միայն ՄԱԿ-ի անդամ, այլեւ որեւէ այլ պետության նկատմամբ: Այն պահին, երբ ադրբեջանա-ղարաբաղյան իրավաքաղաքական տարաձայնությունները վերաճել են զինված ընդհարման, ավելի ճիշտ` երբ Ադրբեջանը ուժ է կիրառել, Լեռնային Ղարաբաղը հռչակված էր որպես անկախ պետություն: Կարեւոր չէ` միջազգայնորեն ճանաչված, թե ոչ: Եվ, հետեւաբար, ապօրինի է Ադրբեջանի կողմից ԼՂՀ հանդեպ ուժի կիրառումը, որն աստիճանաբար վերաճել է բացահայտ ագրեսիայի:

Այստեղ չեն օգնի «Ադրբեջանը չէր կարող հարձակվել իր տարածքի մի մասի վրա»-ի կարգի դեմագոգիաները: Հարձակում չեն գործում անմարդաբնակ տարածքի դեմ: Պետությունները ուժ են կիրառում ոչ թե աշխարհագրական օբյեկտների, այլ դրանք բնակեցնող մարդկանց դեմ: Եվ Ադրբեջանն էլ ոչ թե «իր տարածքի մի մասի», այլ Լեռնային Ղարաբաղում ապրող հայ բնակչության դեմ է ագրեսիա գործել: Այդ ագրեսիայի հետեւանքներն առ այսօր լիովին հաղթահարված չեն: Ադրբեջանական օկուպացիայի տակ է Շահումյանի շրջանը: Ադրբեջանական զինված ուժերը որոշ տարածքներ են վերահսկում նաեւ Մարտակերտի եւ Մարտունիի շրջաններում: Այս փաստը եւս ուղղակի ապացույց է, որ ԼՂՀ-ն ոչ թե նախահարձակ, այլ պաշտպանվող կողմ է:

Եվ, վերջապես, ՄԱԿ-ի կանոնադրության մեջբերված հոդվածի տրամաբանությամբ, ուժի սպառնալիքը կամ դրա կիրառումն ապօրինի է, եթե դա արվում է կազմակերպության նպատակներին հակառակ: Իսկ որոնք են ՄԱԿ-ի նպատակները: Դրանք սահմանված են շատ հստակ: Եվ, ի հեճուկս Ադրբեջանի, դրանցից եւ ոչ մեկում խոսք իսկ չկա պետության տարածքային ամբողջականության պահպանման մասին:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Ինդոնեզիայում գտել են Superjet 100-ի «սեւ արկղը»

Ռուսական «Սուխոյ» ավիաշինական ընկերության Superjet 100 օդանավի աղետը հետաքննող հանձնաժողովը Ինդոնեզիայում երեկ սկսել է նախօրեին հայտնաբերված «սեւ արկղի» ուսումնասիրությունը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ «սեւ արկղը» հայտնաբերվել է աղետի վայրից 500 մետր ցածր գտնվող կիրճում:

«Սեւ արկղը» տարել են մայրաքաղաք Ջակարտա: Վերծանումն Ինդոնեզիայում իրականացվում է ռուսաստանցի փորձագետների մասնակցությամբ: ՌԴ արդյունաբերության եւ առեւտրի փոխնախարար Յուրի Սլյուսարը անձամբ մասնակցում է ձայնագրությունների վերծանմանը: Նրա խոսքերով, «սեւ արկղը» աղետի ժամանակ այրվել է, բայց հիշողության մոդուլը անվնաս է մնացել:

Ռուսական Superjet 100-ը Ինդոնեզիայում ցուցադրական թռիչքի ժամանակ կործանվել էր մայիսի 9-ին: Օդանավում կար 45 մարդ, այդ թվում` 8 ռուսաստանցի, 35 ինդոնեզացի, մեկական ֆրանսիացի եւ ամերիկացի: Նրանք բոլորը զոհվել են, երբ օդանավը բախվել է Սալակ լեռանը: Աղետի ստույգ պատճառները առայժմ հայտնի չեն եւ գուցե պարզ դառնան «սեւ արկղի» ձայնագրությունների վերծանումից հետո: Նախնական տվյալների համաձայն, օդանավը լեռանն է բախվել վատ տեսանելիության պատճառով:

# Ստրոս-Կանը հակընդդեմ հայցով պահանջում է 1 մլն դոլար



Արժույթի միջազգային հիմնադրամի նախկին ղեկավար Դոմինիկ Ստրոս-Կանը, որը Ֆրանսիայի Սոցկուսի հայտնի գործիչներից է եւ անցյալ տարվա նյույորքյան սկանդալից առաջ համարվում էր Ֆրանսիայի նախագահության հավանական թեկնածու, մայիսի 15-ին` նորընտիր սոցիալիստ նախագահ Ֆրանսուա Օլանդի պաշտոնավարության օրը, հակընդդեմ հայց է ներկայացրել` Նյու Յորքի «Սոֆիտել» հյուրանոցի սեւամորթ սպասավորուհի Նաֆիսատու Դիալլոյին մեղադրելով զրպարտության մեջ: Ստրոս-Կանի խոսքերով, Դիալլոյի նկատմամբ սեռական ոտնձգության կեղծ մեղադրանքների պատճառով ինքը հեղինակազրկվեց եւ թողեց պաշտոնը: Իբրեւ փոխհատուցում Ստրոս-Կանը պահանջում է 1 մլն դոլար:

Մեկ տարի առաջ սպասավորուհու պնդումների հիման վրա Նյու Յորքում Ստրոս-Կանը ձերբակալվել էր, նրա նկատմամբ քրեական գործ էր հարուցվել, բայց հետո բոլոր մեղադրանքները հանվել էին:

ԱԹԵՆՔ

# Հունաստանում կանցկացվեն նոր ընտրություններ

## *Նոր չախողումը աղետաբեր կլինի*



**Հունաստանում անցկացվելու են նոր խորհրդարանական ընտրություններ, քանի որ կոալիցիոն կառավարություն կազմելու բոլոր փորձերն արդեն ձախողվել են: Պատգամավորները չեն կարողանում փոխհամաձայնության հասնել: Ոմանք հանդես են գալիս բյուջեի պակասորդի կրճատման ոլորտում երկրի ստանձնած պարտավորությունների կատարման օգտին: Ուրիշները կտրականապես դեմ են դաժան խնայողության միջոցառումներին:**

**Երկար տարիներ Հունաստանում կառավարած ձախամետ PASOK կուսակցության առաջնորդ Եվանգելոս Վենիզելոսը ներկայիս երկպառակությունների առնչությամբ Ռոյթեր գործակալության թղթակցին ասել է. «Ցավոք, երկրին սպասում են նոր խորհրդարանական ընտրություններ: Դա տեղի ունեցավ, քանի որ ոմանք իրենց այսրոպեական կուսակցական շահերը բարձր են դասում Հունաստանի շահերից: Վստահ եմ, այդպես վարվողները սխալ են մեկնաբանել ժողովրդի կամքը»:**

**Մայիսի 16-ին Հունաստանի նախագահ Կարոլոս Պապուլյասը հանդիպում է ունեցել գլխավոր կուսակցությունների առաջնորդների հետ եւ կազմել է ժամանակավոր կառավարություն, որը կգործի մինչեւ կրկնական ընտրությունները: Դրանք տեղի կունենան նախքան հունիսի 17-ը եւ կարժենան մոտ 70 մլն եվրո:**

**Եթե այդ ընտրություններից հետո էլ հույները հրաժարվեն դաժան խնայողության ծրագրից, ապա երկիրը չի ստանա նոր վարկեր: Դրա անխուսափելի հետեւանքները կդառնան դեֆոլտը եւ երկրի դուրս գալը եվրոգոտուց:**

**Այս ամենը շոշափելի հարված կհասցնի եվրոպական ֆինանսական համակարգի կայունությանը: Առաջին հերթին կտուժեն Հունաստանին շռայլորեն ֆինանսավորած բանկերն ու կառավարությունները: Միայն Ֆրանսիան կկորցնի մոտ 50 մլրդ դոլար:**

**Տնտեսագետներից շատերը երկյուղ ունեն, որ եվրոգոտուց Հունաստանի դուրս գալը կառաջացնի «դոմինոյի էֆեկտ»: Ճգնաժամի մեջ հայտնված Իսպանիան, Պորտուգալիան եւ այլ երկրներ կարող են իրենց սնանկ հայտարարել:**

**Հունաստանի տնտեսության ծանր կացության պատճառներն են ուռճացված պետական ծախսերը, վատ հարկահանությունը եւ ֆինանսական ընդհանուր անկարգապահությունը:**

# Օլանդ-Մերկել հանդիպում Բեռլինում



**Ֆրանսիայի նորընտիր նախագահ Ֆրանսուա Օլանդը իր պաշտոնակալության արարողությունից հետո առաջին այցելությունը կատարել է Գերմանիա, որտեղ հանդիպում ունենա կանցլեր Անգելա Մերկելի հետ: Ըստ որում, ինչպես հաղորդում է Ֆրանսպրեսը, նրան չի հաջողվել ժամանակին հասնել Բեռլին, քանի որ օդում կայծակը հարվածել է օդանավին: Թեեւ լուրջ խափանումներ չեն արձանագրվել, Օլանդը վերադարձել է Փարիզ եւ ապա Բեռլին թռել մեկ ուրիշ օդանավով:**

**Բեռլինում բանակցությունների ավարտից հետո Օլանդը եւ Մերկելը հանդես են եկել մամլո ասուլիսում: Նրանք ասել են, որ հանդիպումը եղել է կառուցողական, որ կողմերից յուրաքանչյուրը խոսել է իր լեզվով, բայց դա չի խանգարել փոխըմբռնմանը:**

**Բանակցությունների ժամանակ խոսվել է հիմնականում եվրոգոտու ֆինանսական բարդ վիճակի մասին: Օլանդը մտադիր է Եվրոմիության անդամ երկրներին առաջարկել նոր ֆինանսական պայմանագիր, որը պետական պարտքի կրճատումը զուգորդում է տնտեսության խթանմանը: Երկու ղեկավարները չեն շրջանցել նաեւ Հունաստանի թեման, որի վիթխարի պետական պարտքը ծանր բեռ է դարձել ոչ միայն հույների, այլեւ բոլոր եվրոպական պետությունների համար:**

ԱԶԳ

# Մշակույթ

# «Արաքս» երգչախմբի հոբելյանական համերգը Առնո Բաբաջանյանի 90-ամյակին

*Կոմպոզիտորի երգերը՝ արեւմտահայերեն հնչողությամբ*

Սփյուռքահայ շատ համայնքներում ազգային-մշակութային որեւէ լուրջ ձեռնարկ՝ գրական, երաժշտական կամ մեկ այլ, բացի բուն գեղարվեստական նշանակությունից, համայնքային համախմբումի եւ ազգային ոգեւորության առիթ կարող է հանդիսանալ:

Այդպիսի մի համերգ փետրվարին տեղի է ունեցել Հելիոպոլիսի (Եգիպտոս) «Պլըքսանյան» սրահում՝ նվիրված Առնո Բաբաջանյանի 90-ամյակին: Ինչպես տեղեկանում ենք ՀԲԸՄ Եգիպտոսի շրջանային հանձնաժողովի




ատենապետ **Պերճ Թերզյանի** մեզ հանձնած գրություններից, հայ համայնքի համար շատ սպասված այս համերգը մի քանի անգամ հետաձգվել է՝ երկրի քաղաքական անկայուն վիճակներով պայմանավորված: Հանդիսությունն իրականացվել է Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ, գերաշնորհ Աշոտ եպս Մնացականյանի հովանավորությամբ, Կահիրեի ազգային իշխանությունների կազմակերպությամբ եւ անցել է արտակարգ ջերմ մթնոլորտում եւ բարձր մակարդակով՝ շնորհիվ Կահիրեի ազգային առաջնորդարանի «Արաքս» երգչախմբի: Երաժշտական մի կոլեկտիվ, որն իր գեղարվեստական ծրագրերում մեծ տեղ եւ կարեւորություն է տալիս անցյալի մեր երախտավորներին՝ պատշաճորեն նշելով նրանց հոբելյանները:

Ծրագրի հերթական դրսեւորումներից էր 20-րդ դարի հայ անվանի կոմպոզիտոր Ա. Բաբաջանյանի 90-ամյակի հոբելյանական համերգը, որի ընթացքում հնչել են դաշնամուրային մեկ կատարում, մեկական եռերգ եւ քառերգ, 12 մեներգ, 11 խմբերգ եւ պարային 5 կատարում եւ ստացել հանդիսականի հիացումի բուռն արձագանքը: «Արաքս» երգչախումբը՝ 28 անդամների մասնակցությամբ (19 սոպրանո-ալտ եւ 9 տենոր-բաս), եւս մեկ անգամ հաստատել է իր կատարողական բարձր որակները: Համերգային ծրագրի «Երազանք»՝ նախատրամադրություն ստեղծող խորագիրը լիովին արդարացրել է ունկնդրի սպասելիքները: Այն ավելի բովանդակային է դարձրել կոմպոզիտորի կյանքի հիշարժան բազմաթիվ դրվագների ներկայացումը՝ համերգային կատարումներին պարբերաբար ընդմիջվող (հանդիսավար՝ **Սեւան Տրդատյան**):

Համերգի անակնկալ նորությունը Բաբաջանյանի բազմաթիվ ստեղծագործությունների արեւմտահայերենով հնչումն էր: Հայտնի է, որ կոմպոզիտորի երգերը հիմնականում գրվել են նրա՝ Մոսկվայում բնակվելու տարիներին, ռուսերեն, ինչը արեւմտահայ ունկնդրի համար որոշակի անմատչելիություն-պատնեշ է ստեղծում: Հայտնի է նաեւ, որ նման երաժշտության ունկնդիրը գրեթե նույնքան հետաքրքրված է տեքստային բովանդակությամբ, որքան՝ մեղեդու: «Բաբաջանեական երգ-երաժշտութեան ազգային եւ հանրամատչելի մասը առաւել կամ նուազ չափով յայտնի է գաղութին երաժշտասէր անդամներուն: Մինչդեռ մէկ այլ հսկայական բարձրարժէք եւ նոյնպէս հանրամատչելի բաժին մը, հայերէն չըլլալուն պատճառով, դուրս մնացած է ոչ միայն մեր գաղութի, այլեւ ընդհանրապէս սփիւռքեան ունկնդրի լսադաշտէն: Բայց անոր երաժշտութեան շունչը այնքան արդիական է, որ վստահաբար, հայերէն տարբերակով առաւելագոյնս ընկալելի պիտի դառնար»:

Այս հարցն արծարծվել է եգիպտահայ մտավորական շրջանակներում: Եվ ահա «Արաքս» երգչախմբի գեղարվեստական ղեկավար եւ խմբավար **Միհրան Ղազելյանը** մտահղացել եւ իրագործել է Բաբաջանյանի 15 երգերի ռուսերեն տեքստերի արեւմտահայերեն թարգմանությունը: Եվս 9 մեներգ վերածվել է խմբերգի:

Ռուս ականավոր բանաստեղծներ Ռ. Ռոժդեստվենսկու, Ա. Վոզնեսենսկու եւ Եվ. Եվտուշենկոյի տեքստերի՝ Բաբաջանյանի երաժշտությանը համընթաց ստեղծագործական ներդաշնակությունը, կատարյալ այդ ռիթմիկան պահպանելը թարգմանչից պահանջում էր բառի, հնչյունի, մեղեդու զգացողական ճշգրտություն եւ մանրակրկիտ, նուրբ աշխատանք: Ինչը եւ Միհրան Ղազելյանին հաջողվել է իրականացնել՝ պահպանելով դրանց բարձր գեղարվեստականությունը, բնագրային համարժեքությունը, ամենակարեւորը՝ ստեղծագործության բնորոշ մթնոլորտը:

Համերգային այս կատարման մյուս նորությունը կոմպոզիտորի մի շարք մեներգերի՝ որպես խմբերգ ներկայացումն է: Առավել տպավորիչը «Նոկտյուրնի» խմբերգային մեկնաբանությունն է եղել՝ փորձառու դաշնակահար **Հայկ Ավագյանի** վարպետ կատարմամբ: Համերգն ուղեկցվել է որոշ ստեղծագործությունների պարային բեմականացմամբ. «Արաքս» երգչախմբին բնորոշ մի ոճ, որն արդեն հաջող կիրառվել է Սայաթ-Նովային, Գուսան Շերամին, Կոմիտասին նվիրված հոբելյանական նախորդ համերգների ընթացքում:

Նախապատրաստական 6-ամսյա աշխատանքը իրապես արդյունավորվեց հրաշալի համերգով, եգիպտահայ արվեստասէր հանրության կյանքի այդ մեկ օրը գունավորեց-հարստացրեց՝ պարգեւելով գեղեցիկ երեկոյի անմոռաց տպավորություններ:

«Որեւէ մեծ անհատականութեան նուիրուած յոբելեանական համերգի մը գլխաւոր նպատակը տուեալ անձը հնարաւորինս համակողմանի կարենալ ներկայացնելն է, հնարաւորինս հանրամատչելի:

Վերջ ի վերջոյ, մեծութիւններուն դիմելու, առաւել եւս յաւերժութեան անցած մեծութիւններուն դիմելու նպատակն է ոչ թէ անոնց պարզապէս փառքը հիւսելը, այլ անոնց եւ ամէն արուեստին ընդմէջէն փորձել մենք զմեզ գտնելը, մեր մշակութային ալեծուփ խարխափումներուն ղեկը փարոսամէտ դարձնելը, մեր գեղարուեստական ճաշակը կենդանի, արթուն ու բարձրահայեաց պահելը»:

Այսպիսի վերաբերմունք է արտահայտում Միհրան Ղազելյանը համերգի առիթով ՀԲԸՄ Կահիրեի «Տեղեկատու» պարբերաթերթի հետ ունեցած հարցազրույցում, հավելելով. «Թերեւս երբեմն չնկատուող, բայց վստահ եմ, որ ոչ պակաս յաջողութիւն է սիրով եղած հաւաքական աշխատանքի իւրաքանչիւր դրսեւորում»: Նա ընդգծել է նաեւ երգչախմբի անդամների նվիրվածությունը, առանձնացնելով համերգին յուրահատուկ երանգ հաղորդած մեներգիչներ Գոհար Ղազելյանին, Լալա Նիկոլյանին, Սիլվա Թերզիբաշյանին, Արա Քեոհնեյանին, Սերժ Սեսեֆճյանին եւ մեներգիչ-դպրոցականներ Գոհարիկ Վարդանյանին, Մկրտիչ Ավետանյանին եւ Ռուբեն Սաատին, որոնք, ըստ նրա, ունեն «երգչային պրոֆեսիոնալ ապագա կերտելու բոլոր անհրաժեշտ տուեալները»:

«Արաքս» երգչախմբի գործելակերպի մեջ սկզբունքային տեղ ունի համերգային ծրագրի տպագիր հայտագրի մշակումն ու պատշաճ տպագրությունը երգարան-գրքույկների տեսքով, որը հանդիսականին կոմպոզիտորի արվեստը առավել համակողմանի ընկալելու հնարավորություն կարող է տալ, նպաստել համերգն ավելի մատչելի դարձնել-յուրացնելուն: Այս վերջինի առիթով նույնպես տպագրվել է այդպիսի՝ Առնո Բաբաջանյանի երգերի տեքստը (նաեւ՝ արեւմտահայերեն թարգմանությունները) եւ զուգընթեր ռուսերեն բնագրերն ընդգրկող գրքույկ, կոմպոզիտորի մասին կենսագրական եւ այլ տեղեկություններով, որդու՝ Արա Բաբաջանյանի մտերմիկ հիշողություններով, հայ եւ օտար երաժիշտ-մտավորականների կարծիքներով, հուշերով հագեցած: Մ. Ղազելյանը դա գնահատում է այսպես. «Օրուան երեւոյթը բացահայտող շօշափելի նիւթն ալ ունի փաստագրական, ճանաչողական եւ կրթական արժէք»:

Իսկ ընդհանրապես երգչախմբի ղեկավարը շատ կարեւոր է համարում պատասխանատվության զգացումը եւ անընդհատաբար ստեղծագործական մոտեցումը յուրաքանչյուր նոր համերգին: «Իւրաքանչիւր համերգէ ետք միշտ ալ աւելի դժուար յաղթահարելի խնդիր մը դրուած է երգչախումբին առջեւ: Քանի գիտենք, որ ձեռք բերածով գոհանալը եւ աւելիին չձգտիլը արդէն ձախողութեան սկիզբն է»:

Համերգը, ինչպես նշվում է պարբերաթերթում, «Եգիպտահայ համայնքի խոնարհումն էր Առնո Բաբաջանեան մեծանուն երգահան-դաշնակահարին»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

## ՄԵՔՍԻԿԱ

# Վախճանվել է աշխարհահռչակ գրող Կառլոս Ֆուենտեսը

**Մեքսիկայում 83 տարեկան հասակում վախճանվել է նշանավոր գրող եւ լրագրող Կառլոս Ֆուենտեսը: Հաղորդվում է, որ նա մահացել է Մեխիկոյի մի հիվանդանոցում, ուր տեղափոխվել էր սրտի խնդիրների պատճառով:**



**Ֆուենտեսը ծնվել է 1928-ին դիվանագետի ընտանիքում եւ մանկուց շատ է ճամփորդել: Բնակվել է Վաշինգտոնում, Ռիո դե Ժանեյրոյում, Սանտյագոյում, Բուենոս Այրեսում: Մեքսիկայում ապրել է 1944-1965 թթ.: Դարձել է դիվանագետ, ծառայել Փարիզում, Լոնդոնում եւ այլուր:**

**Լատինամերիկյան ամենահայտնի գրողներից մեկն է: 1954-ին լույս է ընծայել պատմվածքների ժողովածու: 1959-ին միջազգային ճանաչման է արժանացել «Անամպ պարզության երկրամասը» գրքով: Ամենահայտնի գործերից մեկը «Արտեմիո Կրուսի մահը» վեպն է (1962): Ֆուենտեսի վերջին վեպը կոչվում է «Ադամը Եդեմում» (2009): Գրողի երկերը թարգմանված են աշխարհի տասնյակ լեզուներով: Նրա մրցանակներից մեկը Միգել դե Սերվանտեսի մրցանակն է, որը շնորհվում է իսպաներեն գրող ժամանակակից հեղինակներին:**

Պ. Ք.

# Պարույր Աղպաշյանի արաբերեն գրքի շնորհանդեսը

**«Ազգի» խմբագրությունը շնորհակալությամբ ստացել է Պարույր Աղպաշյանի «Մամլոյ յօդուածներ» արաբերեն գիրքը եւ Հայկազյան համալսարանի հրավերը ներկա գտնվելու այդ գրքի շնորհանդեսին, որը տեղի է ունենալու մայիսի 18-ին, Բեյրութի Հայկազյան համալսարանի հանդիսասրահում:**




**«Համազգային» հրատարակչատան թողարկած, 128 էջ պարունակող բարձրորակ հատորը ներառում է «Զարթօնք» օրաթերթի գլխավոր խմբագրի պաշտոնը զբաղեցրած (1990-2007) հեղինակի՝ Պ. Աղպաշյանի այդ նույն օրաթերթում տպագրած 37 հոդվածների արաբերեն թարգմանությունները, վարպետորեն կատարված Նանոր Միքայելյան-Քեֆլիկյանի կողմից:**

**Հոդվածներում քննարկվում են ինչպես Լիբանանի ներքին, արտաքին, այնպես էլ ընդհանուր առմամբ Միջին Արեւելքի եւ նաեւ հայկական համայնքի ու Հայաստան-Լիբանան հարաբերությունների խնդիրները:**

**Գրքի առաջաբանը գրել է լիբանանյան մամլո սինդիկատի նախագահ Մոհամմեդ Բաալբաքին, որը նաեւ պատվո հյուրն է վերոնշյալ միջոցառման: «Այս գիրքը» խորագրի ներքո հեղինակը հակիրճ ներկայացրել է գրքի ստեղծման հանգամանքները եւ շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր իրականություն են դարձրել հրատարակությունը:**

**Իր առաջաբանում պրն Բաալբաքին Աղպաշյանին բնութագրել է որպես «մշտարթուն աչքի», որն իր երիտասարդության ծաղկուն տարիները ու ամբողջ ժամանակը նվիրել է լրագրությանը եւ իր հարազատ «Զարթօնք» օրաթերթին:**

**Գիրքը շնորհանդեսի ժամանակ պետք է ներկայացնի Հայկազյան համալսարանի դասախոսներից դոկտ. Ժան Սալմանյանը:**

Հ. Ծ.

# Դաշնամուրային երաժշտության երեկո

**«Ազգային պատկերասրահ» երաժշտական միջազգային VIII փառատոնի հերթական համերգը կկայանա մայիսի 18-ին կամերային երաժշտության տանը: «Դասական երաժշտության երեկո» ծրագրում մենահամերգով հանդես կգա Երեւանի կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնամուրային ֆակուլտետի դեկան, դաշնակահար Արմեն Բաբախանյանը: Նա երաժշտական ուսումը ստացել է Երեւանում, պրոֆեսոր Ա. Բոգդանյանի դասարանում, այնուհետեւ շարունակել է ուսումնառությունը Կլոդ Ֆրանկի եւ Վերա Գորնոստաեւայի ղեկավարությամբ: Մի շարք միջազգային հեղինակավոր մրցույթների, ինչպիսիք են «Լիդս», «Վան Կլիբերն», «Գարդիան Դուբլին», «Ուիլյամ Կապել», «Ջինա Բախաուեր», հաղթող եւ մրցանակակիր Արմեն Բաբախանյանն իր կատարումների անկեղծությամբ ու արտիստիզմով վաղուց գրավել է հանդիսատեսի եւ երաժշտաքննադատների ուշադրությունը:**

**Արմեն Բաբախանյանը մենահամերգներով հանդես է եկել ԱՄՆ-ում, Կանադայում, Ճապոնիայում, Միացյալ Թագավորությունում, Ավստրիայում, Իտալիայում, Ֆրանսիայում եւ այլուր՝ արժանանալով մեծ ընդունելության ու հիացական խոսքերի:**

**Բաբախանյանը որպես մենակատար հանդես է եկել համաշխարհային հռչակ ունեցող մի շարք նվագախմբերի եւ դիրիժորների հետ: Նրա համերգները հեռարձակվել են հեղինակավոր հեռուստաընկերություններով՝ BBC, PBS, ORF, RAL: Նա վարպետության դասեր է տվել ՌԴ-ում, Իսպանիայում, Անգլիայում, Ճապոնիայում, Չինաստանում, ԱՄՆ-ում: Իսկ 2004-ին Արմեն Բաբախանյանը Երեւանում հիմնեց «Կադանս» անսամբլը, որը ղեկավարում է առ այսօր:**

**«Ազգի» հետ զրույցում պրն Բաբախանյանն ասաց, որ առաջիկայում պլանավորված են մի շարք ելույթներ եւ վարպետության դասընթացներ Գերմանիայում, Իտալիայում, Սլովենիայում, Ֆրանսիայում, Կիպրոսում, ԱՄՆ-ում եւ Ճապոնիայում:**

**Արմեն Բաբախանյանը «Դաշնամուրային երաժշտության երեկո» ծրագրում ընդգրկել է Մոցարտի 12 վարիացիաները, Բերգի դաշնամուրային սոնատը, Ֆրանկի պրելյուդը, Մուսորգսկու «Պատկերներ ցուցահանդեսից» ստեղծագործությունները:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Ուլիսում» խաղային ճգնաժամը շարունակվում է




Երեկ կայացան ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության առաջին տուրից հետաձգված հանդիպումները: Կրկին խաղադաշտ դուրս եկան այն զույգերը, որոնք ընդամենը 4 օր առաջ մրցավեճի էին բռնվել 2-րդ շրջանի մեկնարկային տուրում: Երկրի չեմպիոն «Ուլիսին» ոչ մի կերպ չի հաջողվում դուրս գալ խաղային խոր ճգնաժամից: Հերթական անգամ ուլիսցիները խաղադաշտից հեռացան պարտված: 4 օր առաջ «Փյունիկի» հետ մրցավեճում գրանցվել էր ոչ-ոքի (1-1): Ընդ որում, ուլիսցիները մրցակցի դարպասը գրավել էին «Փյունիկի» դարպասապահ Արսեն Պետրոսյանի կոպիտ սխալի հետեւանքով: Այդ սխալը ճակատագրական եղավ երիտասարդ դարպասապահի համար, որի ծառայություններից «Փյունիկը» հրաժարվեց: «Ուլիսի» հետ երեկ կայացած խաղում «Փյունիկի» դարպասը պաշտպանում էր Ալբերտ Օհանյանը: Հարկ է նշել, որ նա էլ այնքան վստահ չգործեց: Համենայն դեպս, 2-րդ խաղակեսում ուլիսցիներ Թենգիզ Ուգրեկելիձեն եւ Արամ Բարեղամյանը հեռահար հարվածներով գրավեցին Օհանյանի դարպասը, որը բավական հեռացել էր իր տեղից: Բարեբախտաբար, այդ գոլերը չազդեցին հանդիպման արդյունքի վրա, քանի որ դեռեւս առաջին խաղակեսում «Փյունիկը» վճռել էր խաղի ելքը՝ 4 անգամ գրավելով Մանվել Աֆրիկյանի պաշտպանած դարպասը: Փյունիկցիներից 2 գոլ խփեց Կամո Հովհաննիսյանը, մեկական անգամ աչքի ընկան Հովհաննես Հովհաննիսյանն ու Արտակ Եդիգարյանը: «Փյունիկը» հաղթեց 4-2 հաշվով եւ զգալիորեն բարելավեց մրցաշարային վիճակը:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Գյումրիում «Շիրակի» հետ առաջնության առաջատար «Միկայի» մրցավեճը: Չորս օր առաջ Երեւանում կայացած թիմերի հանդիպումն ավարտվել էր «Միկայի» 2-0 հաշվով հաղթանակով: Գյումրիում էլ արդեն 18-րդ րոպեին Բոտի Դեմելը առաջ մղեց «Միկային»: Սակայն քիչ անց, Անդրանիկ Բարիկյանը վերականգնեց հավասարակշռությունը: Գրանցվեց ոչ-ոքի արդյունք:

Ընթացիկ առաջնությունում վերելքով է հանդես գալիս Դիլիջանի «Իմպուլսը», որն այս տուրում հյուրընկալվելիս 2-1 հաշվով պարտության մատնեց «Բանանցին»: «Իմպուլսը» հաշիվը բացեց առաջին խաղակեսի ավարտին Ֆիլիպ Տիմովի դիպուկ հարվածի շնորհիվ: Ընդմիջումից քիչ անց Դու Բալան վերականգնեց հավասարակշռությունը: «Իմպուլսին» հաղթանակ պարգեւեց «Բանանցի» նախկին հարձակվող Նորայր Գյոզալյանը:

Կապանում «Արարատը» հյուրընկալվել էր «Գանձասարին»: Խաղը մոտենում էր ավարտին, սակայն դարպասի գրավում այդպես էլ չէր արձանագրվել: Թվում էր, թե արարատցիները 1 միավոր կվաստակեն, սակայն վերջին վայրկյաններին դաշտի տերերը Սերգեյ Զույկոյի հարվածի շնորհիվ կորզեցին հաղթանակը: «Արարատը» ցավալի պարտություն կրեց, իսկ «Գանձասարը» միացավ առաջատարներին:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Միկա | 8 | 5 | 2 | 1 | 12-7 | 17 |
| 2. Իմպուլս | 8 | 5 | 1 | 2 | 14-9 | 16 |
| 3. Գանձասար | 8 | 5 | 1 | 2 | 9-3 | 16 |
| 4. Շիրակ | 8 | 4 | 1 | 3 | 10-10 | 13 |
| 5. Փյունիկ | 8 | 3 | 3 | 2 | 11-10 | 12 |
| 6. Բանանց | 8 | 2 | 3 | 3 | 9-9 | 9 |
| 7. Արարատ | 8 | 1 | 0 | 7 | 6-17 | 3 |
| 8. Ուլիս | 8 | 0 | 3 | 5 | 5-11 | 3 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 5 |
| Դեյան Վուկոմանովիչ | «Գանձասար» | 3 |
| Հովհաննես Համբարձումյան | «Բանանց» | 3 |
| Աղվան Մկրտչյան | «Միկա» | 3 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 3 |
| Կամո Հովհաննիսյան | «Փյունիկ» | 3 |
| Հովհաննես Հովհաննիսյան | «Փյունիկ» | 3 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 3 |
| Ֆիլիպ Տիմով | «Իմպուլս» | 3 |

# Ձին մասնակցեց հեծանվավազքին



Շոտլանդիայում անցկացված խճուղային հեծանվավազքի ժամանակ հետաքրքրական դեպք տեղի ունեցավ: Դաշտում արածող 2 ձիերից մեկը ցատկելով արգելապատնեշի վրայով, հայտնվեց հեծանվորդների մեջ՝ ակամա մասնակցելով յուրօրինակ մրցավազքին: Լավ է, որ հեծանվորդները խուճապի չմատնվեցին: Նրանք նվազեցրին արագությունը, հեծանվավազքը շարունակեցին ճամփեզրով, որպեսզի ձիուն ազատ տեղաշարժվելու հնարավորություն ընձեռեն՝ խուսափելով նրա հետ բախումից: Որոշ ժամանակ անց մրցումների կազմակերպիչներին հաջողվեց «անկոչ հյուրին» դուրս բերել մրցուղուց:

# Վան Պերսին հետաքրքրել է «Յուվենտուսին» եւ «Մանչեսթր Սիթիին»

**Անգլիայի ավարտված առաջնության լավագույն ռմբարկու Ռոբին վան Պերսին Թուրինի «Յուվենտուսի» հետ համաձայնեցրել է անձնական պայմանագրի կետերը: Այժմ «Արսենալի» հոլանդացի հարձակվողը սպասում է ակումբի ղեկավարության որոշմանը: Եթե ամեն ինչ բարեհաջող ընթանա, ապա հոլանդացի ֆուտբոլիստը «Յուվենտուսի» հետ 4 տարվա պայմանագիր կկնքի: Նրան տարեկան 7,5 մլն եվրո աշխատավարձ կվճարվի, չհաշված պարգեւավճարները:**

**Անգլիայի առաջնությունում Ռոբին վան Պերսին 30 գոլ խփեց՝ կրկնելով «Արսենալի» նախկին ֆուտբոլիստ Թյերի Անրիի արդյունավետության ռեկորդը: Բնականաբար թիմի գլխավոր մարզիչ Արսեն Վենգերը մտադիր չէ բաժանվել նրանից:**

**Հոլանդացի ֆուտբոլիստով հետաքրքրվում է նաեւ «Մանչեսթր Սիթին», որը պատրաստ է նրա տրանսֆերի համար 25 մլն ֆունտ ստեռլինգ վճարել, իսկ վան Պերսիին առաջարկել շաբաթական 250 հազար ֆունտ ստեռլինգ աշխատավարձ, ինչը 3 անգամ կգերազանցի ներկայիս աշխատավարձը:**

# Նիստելռոյն ավարտեց ելույթները

Հոլանդիայի հավաքականի նախկին հարձակվող Ռուդ վան Նիստելռոյը ֆուտբոլային կարիերայում վերջին հանդիպումն անցկացնելով իսպանական «Մալագայի» կազմում, հայտարարել է մեծ ֆուտբոլին հրաժեշտ տալու որոշման մասին:

«Եկել է պահը հրաժեշտ տալու ֆուտբոլին: «Սպորտինգի» հետ խաղը վերջինն է իմ մարզական կարիերայում: Երազում էի «Մալագայի» կազմում մասնակցել չեմպիոնների լիգայի մրցաշարին, սակայն զգում եմ, որ եկել է հեռանալու պահը», հայտարարել է Նիստելռոյը:

Հոլանդացի ֆուտբոլիստը ֆուտբոլային կարիերան սկսել է հայրենիքում՝ «Դեն Բոսխ» թիմում: Ժամանակի ընթացքում նա դարձավ եվրոպական ֆուտբոլի անվանի հարձակվողներից մեկը՝ աչքի ընկնելով ռմբարկուի հատկանիշներով: «Էյնդհովենի», «Մանչեսթր Յունայթեդի» եւ Մադրիդի «Ռեալի» կազմում չեմպիոնների լիգայի մրցաշարում անցկացրած 73 խաղում Նիստելռոյը 56 գոլ է խփել: Այդ թիմերի կազմերում նա դարձել է Հոլանդիայի, Անգլիայի եւ Իսպանիայի չեմպիոն: Ընդհանուր առմամբ պաշտոնական մրցումներում Նիստելռոյը 449 խաղում 249 գոլի հեղինակ է դարձել: Հոլանդիայի ազգային հավաքականում 70 խաղում նա 34 գոլ է խփել: Բացի վերը նշված ակումբներից, Նիստելռոյը հանդես է եկել նաեւ հոլանդական «Հերենվենում» եւ գերմանական «Համբուրգում»:

## ՇԱԽՄԱՏ

# Տուրը հաղթական էր Հակոբյանի եւ Աբրահամյանի համար

**Մեկօրյա հանգստից հետո շախմատի ԱՄՆ-ի առաջնության մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջը: Տղամարդկանց մրցաշարի 7-րդ տուրում Վարուժան Հակոբյանը սեւերով պարտության մատնեց Ռոբերտ Հեսին ու վաստակած 3,5 միավորով զբաղեցնում է 6-րդ հորիզոնականը:**

**5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Հիկարու Նակամուրան եւ Գատա Կամսկին: Նակամուրան ոչ-ոքի խաղաց Յուրի Շուլմանի հետ, իսկ Կամսկին հաղթեց Ալեքսանդր Ստրիպունսկուն: 4-ական միավորով առաջատարներին հետապնդում են Ալեքսանդր Լենդերմանը, Ալեքսանդր Օնիշչուկն ու Յուրի Շուլմանը: 8-րդ տուրում Հակոբյանը կմրցի Ալեխանդրո Ռամիրեսի հետ: Մրցաշարի ավարտին մնացել է 4 տուր:**

**Կանայք անցկացրին 6-րդ տուրի հանդիպումները: Տաթեւ Աբրահամյանը սպիտակներով հաղթեց Ֆրանչեսկա Ֆոյսորին ու վաստակելով 3,5 միավոր, զբաղեցրեց 4-րդ տեղը: 7-րդ տուրում Տաթեւը սեւերով կխաղա Ռուսուդան Գոլեթիանիի հետ, որը եւս ունի 3,5 միավոր եւ ընթանում է 3-րդ տեղում: Իսկ առաջատարներն են 4,5-ական միավոր վաստակած Աննա Զատոնսկիխն ու Իրինա Կրուշը: Զատոնսկիխը հաղթեց Իրինա Զենյուկին, իսկ Կրուշը հաշտություն կնքեց Գոլեթիանիի հետ: 7-րդ տուրում առաջատարները մրցելու են միմյանց հետ: Սպիտակ խաղաքարերով խաղալու է Աննա Զատոնսկիխը:**

# Տխուր ավանդույթը չխախտվեց

**Դավիթ Նալբանդյանի համար կարծես ավանդույթ է դարձել հաջող մեկնարկից հետո 2-րդ փուլից պայքարից դուրս մնալը: Հռոմի թենիսի մրցաշարում էլ այդ տխուր ավանդույթը չխախտվեց: 2-րդ փուլում նա չկարողացավ հաղթահարել բրիտանացի Էնդի Մարեյի դիմադրությունը (1-6, 6-4, 5-7) ու դուրս մնաց պայքարից:**

# Հաղթանակ եւ պարտություն միեւնույն հաշվով

**Տվերում ընթացող տափօղակով հոկեյի միջազգային պատանեկան մրցաշարում Հայաստանի պատանի հոկեյիստները հերթական հանդիպումներն անցկացրին: Առաջին մրցախաղում մեր հավաքականը 3-2 հաշվով հաղթեց Բելառուսի «Մետալուրգին», իսկ հաջորդ խաղում նույնպիսի հաշվով զիջեց Լատվիայի պատանեկան հավաքականին:**

**8 միավորով ՀՀ հավաքականը շարունակում է զբաղեցնել 9-րդ տեղը: Մեր թիմի հաջորդ մրցակիցներն են Նովոսիբիրսկի «Սիբիրը» եւ Կարագանդայի «Յունոստը»:**

# Ֆուտբոլի խաղի ծրագիրը վաճառվեց ռեկորդային գնով




1909-ի ֆուտբոլի Անգլիայի գավաթի եզրափակիչ հանդիպման ծրագիրը Լոնդոնում կայացած աճուրդում վաճառվել է 23,5 հազար ֆունտ ստեռլինգով: Դա ռեկորդային գումար է ֆուտբոլային ծրագրերի համար: Նախկին ռեկորդը սահմանվել էր 2006-ին, երբ 1889-ի Անգլիայի գավաթի եզրափակիչի ծրագիրը վաճառվել էր 21,85 հազար ֆունտ ստեռլինգով:

Ծրագրի համար ռեկորդային գումար էր վճարել բրիտանացի հավաքորդը: Աճուրդի կազմակերպիչները մտավախություն ունեին, որ ծրագրի գնորդը կարող է արտերկրից լինել, քանի որ անգլիական «Մանչեսթր Յունայթեդի» երկրպագուները շատ են նաեւ Անգլիայից դուրս:

Հիշեցնենք, որ 1909-ի Անգլիայի գավաթի եզրափակիչում պատվավոր մրցանակը վիճարկել էին «Մանչեսթր Յունայթեդն» ու «Բրիստոլ Սիթին»: Լոնդոնի «Քրիստալ Պելաս» մարզադաշտում կայացած այդ խաղում 1-0 հաշվով հաղթել էր «Մանչեսթր Յունայթեդը», որն առաջին անգամ էր Անգլիայի գավաթի եզրափակիչ մտել:

# Վրաստանը կպայքարի Եվրո-2020-ի համար

Վրաստանը ֆուտբոլի 2020-ի Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի անցկացման պաշտոնական հայտ է ներկայացրել: Բացի Վրաստանից, Եվրոպայի առաջնության համար կպայքարի նաեւ Թուրքիան, իսկ Իռլանդիան, Շոտլանդիան եւ Ուելսը համատեղ հայտ են ներկայացրել:

Դեռեւս ամիսներ առաջ Վրաստանն ու Ադրբեջանը մտադրվել էին համատեղ հայտ ներկայացնել: Սակայն վերջին պահին Ադրբեջանը հրաժարվեց այդ մտքից, որոշելով կենտրոնանալ 2020-ի ամառային օլիմպիադայի վրա: Ինչպես հայտնի է, ՄՕԿ-ը չի խրախուսում միեւնույն քաղաքի առաջադրումը միանգամից 2 խոշոր մրցաշարերի անցկացմանը: Վերջերս ՄՕԿ-ի նախագահ Ժակ Ռոգեն դիմել էր Ստամբուլի իշխանություններին, որպեսզի Թուրքիան 2020-ի ամառային օլիմպիական խաղերից ու ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունից միայն մեկն ընտրի:

Վրաստանի իշխանությունները նախատեսում են արդեն այս տարվանից սկսել Լանչխութիում, Բաթումում եւ Զուգդիդիում նոր մարզադաշտերի շինարարությունը: Իսկ Թբիլիսիի, Գորիի, Քութայիսի եւ Ռուսթավիի մարզադաշտերը կվերակառուցվեն: Համապատասխան աշխատանքներ կտարվեն ընդլայնելու հյուրանոցային ցանցը, բարելավելու մյուս ենթակառուցվածքները:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Քրքումը կարող է պայքարել աղիքային քաղցկեղի դեմ

Մեծ Բրիտանիայում գիտնականները ուսումնասիրում են, թե արդյոք կարի (քրքում) համեմունքը կարո՞ղ է դրական ազդեցություն ունենալ աղիքային քաղցկեղ ունեցողների բուժման վրա:

Քիմիաթերապիային զուգընթաց հիվանդները կընդունեն քրքում պարունակող հաբեր՝ մի բաղադրիչ, որը հայտնաբերվել է դեղին կարի համեմունքի մեջ:

Լաբորատոր փորձարկումներով պարզվել է, որ քրքումը ուժեղացնում է քիմիաթերապեւտիկ դեղամիջոցների՝ աղիքային քաղցկեղի բջիջները սպանելու հատկությունը: Հայտնի է, որ քրքումն ունի ուժեղ հակաբորբոքային հատկություն եւ անտիօքսիդանտ է:

Որոշ ուսումնասիրություններ էլ մատնանշում են, որ քրքումը կարող է դանդաղեցնել քաղցկեղի տարածումը, բարելավել քիմիաթերապիայի արդյունավետությունը եւ պաշտպանել առողջ բջիջները ճառագայթաբուժության հետեւանքներից: Այնուամենայնիվ, պաշտոնական կերպով իրականացված գիտական փորձերի փաստարկները բացակայում են:

Երկու տարի շարունակվող ուսումնասիրությունները կատարում են Մեծ Բրիտանիայի Քաղցկեղի ուսումնասիրության կենտրոնի եւ Լեսթերի համալսարանի գիտնականները՝ ներգրավելով աղիքային քաղցկեղով տառապող 40 հիվանդների, որոնց մոտ այն տարածվել է մինչեւ լյարդը:

Ուսումնասիրության ղեկավար, Լեսթերի համալսարանի քաղցկեղի փորձարարական բժշկության կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Վիլյամ Սթյուարդն ասում է. «Հեռանկարը, որ քրքումը կարող է ուժեղացնել քիմիաթերապիայի ազդեցությունը քաղցկեղի բջիջների վրա, շատ ոգեւորող է, քանի որ այս դեպքում հիվանդներին ավելի քիչ քանակությամբ քիմիաթերապեւտիկ դեղորայք կտրվի, որն էլ իր հերթին նշանակում է, որ հիվանդները ավելի քիչ կողմնակի ազդեցությունների կենթարկվեն, եւ բուժման կուրսը հնարավոր կլինի ավելի երկար շարունակել»:

**«Ինդեփենդենթ»**

**Թարգմ.՝**

**ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**

# Նստած աշխատելը կրկնապատկում է թրոմբոզի վտանգը

Գրասենյակային աշխատանքը կրկնապատկում է նույնիսկ երիտասարդ մասնագետների օրգանիզմի թրոմբի (արենախիցքի) գոյացման վտանգը, հաշվարկել է Lifeblood բարեգործական ընկերության պրոֆեսոր Բեւերլի Հանթը: Երբեմն մարդը անընդմեջ նստած է անցկացնում երեք ժամ, տանն էլ նստում է բազմոցին, նշում է The Telegraph հրատարակությունը:

30 տարեկանից ցածր 1000 աշխատողների հետազոտությունը ցույց է տվել, որ մարդիկ նախընտրում են բոլոր գործերն անել աշխատասեղանի մոտ, իսկ տուն վերադառնալով՝ 10 մարդուց 8-ը նստում է բազմոցին: Մինչդեռ 90 րոպե նստած մնալը ոտքերի արյան հոսքն արգելակում է 50 տոկոսով, մեծացնում թրոմբի գոյացման հավանականությունը:


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 04-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

***Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ԱՇՁԲ - 22/12***

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի 2-րդ էներգաբլոկում A-004/3,4 տարածքներում հերմետիկ անցասարքվածքների, հսկիչ, չափիչ սարքերի հետվթարային և պահուստային ղեկավարման վահանակի ներդրման նախագծային աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու 2-րդ էներգաբլոկում A-004/3,4 տարածքներում հերմետիկ անցասարքվածքների, հսկիչ, չափիչ սարքերի հետվթարային և պահուստային ղեկավարման վահանակի ներդրման նախագծային աշխատանքների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2012թ. սեպտեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են մասնակցել բաց ընթացակարգին, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բաց ընթացակարգի թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու պահից հաշված 40-րդ օրվա ժամը 13:30:

Բաց ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով կամ համարժեք արտարժույթով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում բաց ընթացակարգի հրավերը տրամադրել բաց ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին հետևյալ հասցեով. Արմավիրի մարզ ք. Մեծամոր, վարչական մասնաշենք, մինչև սույն հայտարարության հրապարակման պահից հաշված 40-րդ օրվա ժամը 13:30 և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում:

Հայտերի բացման վայրը, օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Հաղթող մասնակցին որոշելու համար կիրառվելու են հետևյալ չափանիշները

- հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, բավարար գնահատված և մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***«Հայկական ատոմային էլեկտրակայան»***
***փակ բաժնետիրական ընկերություն***



## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հերացի 16 շ. 55 տարածք | ոչ բնակելի ածուղ | | 97.32 | 6,500,000 |
| 2 | Մաշտոցի 23/3 | կաթսայատուն | 286.15 | 219.4 | 34,200,000 |
| 3 | Ագաթանգեղոսի փողոց 7շ-24/25 կաթսայատուն | կաթսայատուն | 251.4 | 202.7 | 28,680,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ. հունիսի 1-ին ժ.16.00-ին, ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ. հունիսի 1-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 04-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

***Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ԱՇՁԲ - 21/12***

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի հեռատեսողական, գերձայնային և մրրկահոսանքային մեթոդներով ռեակտորի ներքին մակերեսների և եռակցված միացումների շահագործողական հսկման աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու հեռատեսողական, գերձայնային և մրրկահոսանքային մեթոդներով ռեակտորի ներքին մակերեսների և եռակցված միացումների շահագործողական հսկման աշխատանքների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2012թ. հոկտեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են մասնակցել բաց ընթացակարգին, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բաց ընթացակարգի թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու պահից հաշված 40-րդ օրվա ժամը 14:00:

Բաց ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով կամ համարժեք արտարժույթով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում բաց ընթացակարգի հրավերը տրամադրել բաց ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին հետևյալ հասցեով. Արմավիրի մարզ ք. Մեծամոր, վարչական մասնաշենք, մինչև սույն հայտարարության հրապարակման պահից հաշված 40-րդ օրվա ժամը 14:00 և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում:

Հայտերի բացման վայրը, օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Հաղթող մասնակցին որոշելու համար կիրառվելու են հետևյալ չափանիշները

- հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, բավարար գնահատված և մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***«Հայկական ատոմային էլեկտրակայան»***
***փակ բաժնետիրական ընկերություն***



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 04-ի թիվ 1 որոշմամբ**

***Ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ - 23/12***

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի «TATRA» տիպի քարշակի միջոցով աշխատանքային պաշարները սպառած վառելիքի՝ դեպի 2-րդ հերթի միջուկային չոր վառելիքի պահեստարան տեղափոխման աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում «TATRA» տիպի քարշակի միջոցով աշխատանքային պաշարները սպառած վառելիքի՝ դեպի 2-րդ հերթի միջուկային չոր վառելիքի պահեստարան տեղափոխման աշխատանքների կատարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2012թ. հոկտեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 11-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ը: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 11-րդ օրացուցային օրվա ժամը 12:00 և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

***«Հայկական ատոմային էլեկտրակայան»***
***փակ բաժնետիրական ընկերություն***


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 16.5.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: